

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄ**

**Արձանագրություն թիվ 4
29.12.2020թ.**

1. Գիտական եվ գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման «Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրերի շրջանակներում «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի գիտական կազմակերպությունների ու ստորաբաժանումների կողմից 2020թ. հունվար-դեկտեմբեր ամիսների ընթացքում կատարված աշխատանքների հաշվետվությունների հաստատման հարցի վերաբերյալ.

ՀԱԱՀ «Ագրոկենսատեխնոլոգիայի գիտական կենտրոն», «Հ. Պետրոսյանի անվան հողագիտության, մելիորացայի և ագրոքիմիայի գիտական կենտրոն», «Ոսկեհատի խաղողագինեգործության գիտական կենտրոն» մասնաճյուղերի, «Մննդագիտության և կենսատեխնոլոգիաների» և, «Գյուղատնտեսության մեքենայացման և ավտոմատացման» գիտահետազոտական ինստիտուտների, «Գյուղատնտեսական կենդանիների սելեկցիայի, գենետիկայի և կերակրման», «Պեստիցիդների սինթեզի և փորձաքննության», «Բույսերի գենոֆոնդի և սելեկցիայի», «Անասնաբուժության և անասնաբուժական սանիտարական փորձաքննության», «Ագրարային քաղաքականության և տնտեսագիտության» և «Էկոլոգիայի և օրգանական գյուղատնտեսության» հետազոտական կենտրոնների, ինչպես նաև «Կենսաբանական հետազոտությունների» լաբորատորիայի կողմից գիտական եվ գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման «Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրերի շրջանակներում 2020թ. հունվար-դեկտեմբեր ամիսների ընթացքում կատարված աշխատանքների տարեկան հաշվետվությունները հաստատել և երաշխավորել ներկայացնելու ՀՀ գիտության կոմիտե:

2. ՀԱԱՀ մեթոդական խորհրդի կողմից ներկայացված ուսումնական և օժանդակ գրականության տպագրության երաշխավորման հարցի վերաբերյալ.

«Հողագիտություն» վերնագրով դասագիրքը (հեղինակ՝ Մանուկյան Ռ.Ռ.), «Գիտահետազոտական մեթոդներն ու եղանակները անտառագիտության և կանաչապատման մեջ» վերնագրով ուսումնական ձեռնարկը (հեղինակներ՝ Գրիգորյան Ա.Ա., Խուրշուդյան Հ.Պ., Փահլևանյան Ա.Մ., Թարխանյան Զ.Թ.) և «Կենսագազային տեղակայանքներ» (հեղինակ՝ Մարգարյան Ս.Ե.) վերնագրով գիրքը երաշխավորել տպագրության:

3. ՀԱԱՀ Անասնաբուժական մթերքների վերամշակման տեխնոլոգիաների ամբիոնի ասպիրանտ Ամիր Նասիր Ռոսթամի Նաջաֆաքադիի «Յոգուրտի

տեխնոլոգիայի կատարելագործումը ֆորտիֆիկացիայի եղանակով» թեմայով թեկնածուական ատենախոսությունը հրապարակային պաշտպանության երաշխավորելու հարցի վերաբերյալ.

ՀԱԱՀ Անասնաբուծական մթերքների վերամշակման տեխնոլոգիաների ամբիոնի ասպիրանտ Ամիր Նասիր Ռոսթամի Նաջաֆաքադիի «Յոգուրտի տեխնոլոգիայի կատարելագործումը ֆորտիֆիկացիայի եղանակով» թեմայով, Ե.18.01 «Բուսական և կենդանական ծագման մթերքների վերամշակման և արտադրության տեխնոլոգիա» մասնագիտությամբ տեխնիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը երաշխավորել հրապարակային պաշտպանության:

4. ՀԱԱՀ այգեպտղաբուծության և բույսերի պաշտպանության ամբիոնի առկա ուսուցման ասպիրանտ Արման Հրանտի Բաբայանի թեկնածուական ատենախոսական աշխատանքի թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցի վերաբերյալ.

4.1. ՀԱԱՀ այգեպտղաբուծության և բույսերի պաշտպանության ամբիոնի առկա ուսուցման ասպիրանտ Արման Հրանտի Բաբայանի թեկնածուական ատենախոսական աշխատանքի թեման հաստատել հետևյալ վերնագրով. «Երևան քաղաքի բուրումնավետ ծառատեսակների վնասատուները և պայքարի համակարգի մշակումը»՝ Զ.01.02 «Բուսաբուծություն, խաղողագործություն, պտղաբուծություն և բույսերի պաշտպանություն» մասնագիտությամբ,

4.2. Ատենախոսական աշխատանքի գիտական ղեկավար հաստատել կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ստեփան Վարուժանի Հովհաննիսյանին:

5. ՀԱԱՀ այգեպտղաբուծության և բույսերի պաշտպանության ամբիոնի առկա ուսուցման ասպիրանտ Արգիշտի Հակոբի Ստեփանյանի թեկնածուական ատենախոսական աշխատանքի թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցի վերաբերյալ.

5.1. ՀԱԱՀ այգեպտղաբուծության և բույսերի պաշտպանության ամբիոնի առկա ուսուցման ասպիրանտ Արգիշտի Հակոբի Ստեփանյանի թեկնածուական ատենախոսական աշխատանքի թեման հաստատել հետևյալ վերնագրով. «Արագածոտնի մարզի կաղնու համակեցությունների վնասատուները և պայքարի համակարգի մշակումը»՝ Զ.01.02 «Բուսաբուծություն, խաղողագործություն, պտղաբուծություն և բույսերի պաշտպանություն» մասնագիտությամբ:

5.2. Ատենախոսական աշխատանքի գիտական ղեկավար հաստատել կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ստեփան Վարուժանի Հովհաննիսյանին:

6. ՀԱԱՀ ագրոբիզնեսի կառավարման և քաղաքականության ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու Արման Համլետի Հարությունյանի դոկտորական ատենախոսության թեմայի հաստատման հարցի վերաբերյալ.

Ագրոբիզնեսի կառավարման և քաղաքականության ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու Արման Համլետի Հարությունյանի դոկտորական ատենախոսության թեման հաստատել հետևյալ անվանումով. «Գինու զբոսաշրջության զարգացման հիմնախնդիրները և լուծման սոցիալ-տնտեսական նշանակությունը Հայաստանի Հանրապետությունում»՝ Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝



Վ.Է. ՈՒՌՈՒՏՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝



Գ.Վ. ԱՎԱԳՅԱՆ